ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԷՍ-2019/20, 13.02.2019թ.

Բողոք բերող անձ՝ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ

Պատվիրատու ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի քաղաքապետարան

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/2-1» ծածկագրով գնանշման հարցում

Գնման առարկա Ոսկյա կախազարդի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

Վերանայել ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/2-1» ծածկագրով գնանշման հարցման արդյունքները կամ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող անձ՝

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ -1
<<ԳՆՈՄՈՆ>> ԲԲԸ
ք. Երևան, Արշակունյաց 12
sales@yerjewel.com, +374 10 52 53 61

Պատվիրատու՝

ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ
քաղաքապետարան
Երևանյան

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

ԵՂՎԱՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՍԿՅԱ
ԿԱԽԱՋԱՐԴԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ
<<ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/2-1>> ծածկագրով
գնանշման հարցում

Բ Ո Ղ Ո Ք

1.Բողոքի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը:

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ -1<<ԳՆՈՄՈՆ>> ԲԲԸ-ն(այսուհետ՝ Ընկերություն) սույն թվականի հունվարի 25-ին մասնակցել է **ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքապետարանի** (այսուհետ՝ պատվիրատու) կողմից կազմակերպված <<ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/2-1>> ծածկագրով ԳՀ-ին (այսուհետ՝ մրցույթ): Մրցույթի գնահատող հանձնաժողովը՝ բացման նիստի թիվ 2 արձանագրությունը կազմել է խախտումներով՝ համաձայն որի Ընկերությունը զբաղեցնում է 7-րդ տեղը (կից ներկայացված է ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2):

Խնդրում ենք ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի քաղաքապետարանի կողմից կազմակերպված <<ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/2-1>> ծածկագրով գնանշման հարցման արդյունքները վերանայել կամ գնման ընթացակարգը համարել չկայացած:

Նշենք,որ <<ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/2-1>> ծածկագրով Մրցույթին Ընկերության կողմից մնացած բոլոր մասնակիցների համեմատ առաջարկվել է առանց ԱԱՀ-ի ամենացածր գինը :

2.Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները

Խախտվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի Հոդված 34-ի կետ 3-ով մեր Ընկերության իրավունքները, ըստ որի եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

3.Բողոքարկման վճարը կատարած լինելը ապահովող փաստաթղթի պատճենը

Վճարման հանձնարարագիր թիվ 62 առ 01.Փետրվարի 2019թ

4.Այլ անհրաժեշտ տեղեկություններ

Կից ներկայացնում ենք բացման նիստի արձանագրությունը /3 թերթ/

Բողոքատերի անվանումը(անունը)(ղեկավարի պաշտոնը, անուն, ազգանուն)

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ -1 <<ԳՆՈՄՈՆ>> ԲԲԸ

Գլխավոր տնօրեն՝ Էմիլ Գիրգորյան

Կատարող՝
Հասարակական հարաբերությունների բաժին
Հեռ. 010 52 53 61